ՀԱՐԱՎՕՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Վահե Սարգսյան*

Բանալի բառեր ՝ Հարավային Օսիա, հարավօսական հիմնահարց, ռազմական բախումներ, միջազգային ճանաչում:

Վրաստանի պատմության սակաշվիլիական դարաշրջանի վերաբերյալ հայկական, վրացական և այլ շրջանակներում ձևավորված պատկերացումները դեռևս հեռու են համակողմանի և խորքային համարվելուց: Այդ պատկերացումներն առավել քան հակասական են, հաճախ՝ խիստ միակողմանի: Պատճառը և՛ համապատասխան տեղեկատվության պակասն է, և՛ որոշ շրջանակների կողմից հատուկ նպատակներով տարվող միակողմանի քարոզչությունը: Սույն աշխատանքում Հվ. Օսիայի հիմնահարցի արծարծմամբ փորձ ենք արել որոշ չափով լրացնել նշյալ տեղեկատվական բացը:

Ռազմաքաղաքական զարգացումները Հարավային Օսիայում 1989-2008թթ.: Վրաց–օսական առաջին պատերազմը

Հարավօսական հիմնահարցի մերօրյա փուլի սկզբնավորումը կարելի է համարել 1989թ., երբ նույն թվականի նոյեմբերի 10-ին Հարավօսական Ինքնավար Մարզի Ժողովրդական պատգամավորների խորհուրդն իր 20-րդ գումարման 12-րդ արտակարգ նստաշրջանում կայացրեց Հարավօսական Ինքնավար Մարզի կարգավիճակի բարձրացման մասին որոշումը, որով այն վերափոխվեց Հարավօսական Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետության[1]: Նույն օրը օսերենը Հարավօսական Ինքնավար Մարզի տարածքում հայտարարվեց պետական լեզու[2]: Վրաստանի նորընտիր ԳԽ-ն դեկտեմբերի 11-ին (հիշեցնենք, որ 1990թ. դեկտեմբերի 9-ին Հվ.

* ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող, պ.գ.թ.:

[1] Решение чрезвычайной XII сессии Совета народных депутатов Юго-осетинской Автономной Области двадцатого созыва о повышении статуса Юго-осетинской Автономной Области, *Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг., составление и комментарии М.А. Волхонский, В.А. Захаров, Н.Ю. Силаев, М., 2008,* с. 178.

[2] Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг., с. 178-179.

Օսիայում անցկացվել էին խորհրդարանական ընտրություններ) ընդունեց «Հվ. Օսիայի Ինքնավար Մարզի վերացման մասին» օրենքը, որով ինքնավար մարզի հետ մեկտեղ վերացվեցին նաև Հարավօսական ԻՄ Ժողովրդական պատգամավորների խորհուրդը, նրա գործադիր կոմիտեն, ԻՄ բոլոր պետական օրգանները, ինչպես նաև ուժը կորցրած համարվեցին Վրաստանի Ժողկոմխորհի և Համավրաստանյան Կենտգործկոմի «Հվ. Օսիայի ԻՄ կազմավորման մասին» 1922թ. ապրիլի 20-ի N 2 Դեկրետը և Վրացական ԽՍՀ 1980թ. նոյեմբերի 12-ի «Հվ. Օսիայի ԻՄ-ի մասին» օրենքը[1]: Բնականաբար, Զ.Գամսախուրդիայի սույն քայլը Վրաստանի ԳԽ-ի՝ խորհրդային շրջանում կնքված բոլոր պայմանագրերը չեղյալ հայտարարելու և ստեղծված պետական կազմավորումները մերժելու մասին 1989-1990թթ. ընդունած որոշումների իրավական հետևանքն էր:

Վերոնշյալ գործընթացները չհանգեցրին վրաց-օսական հակամարտության խաղաղ կարգավորմանը, ինչի արդյունքում կարճ ժամանակ անց՝ 1991թ. հունվարի 6-ին, սկսվեցին զինված բախումները, որոնք շարունակվեցին ավելի քան մեկուկես տարի և ավարտվեցին 1992թ. հունիսին՝ Վրաստանի և Ռուսաստանի միջև Դագոմիսյան պայմանագրի կնքմամբ[2]: Հվ. Օսիայի Հանրապետության (ՀՕՀ) Գերագույն խորհրդի 1991թ. դեկտեմբերի 21-ի նիստում ընդունվեց երկրի անկախության հռչակման մասին դեկլարացիան[3], մեկ ամիս անց՝ 1992թ. հունվարի 19-ին, ՀՕՀ-ում անցկացվեց համաժողովրդական հանրաքվե, և հանրաքվեին մասնակցած 53.441 քաղաքացիների շուրջ 99%-ը կողմ արտահայտվեց ՀՕՀ անկախությանն ու ՌԴ-ի հետ վերամիավորմանը[4]: Ելնելով այս տրամադրություններից՝ ՀՕՀ ԳԽ-ը 1992թ. մայիսի 29-ին ընդունում է ՀՕՀ անկախության հռչակման ակտը[5]:

Վրաց-օսական առաջին պատերազմի ավարտից և Դագոմիսյան պայմանագրի կնքումից հետո էլ, մինչև 2000-ական թթ., Հվ.Օսիայի ղեկավարու-

[1] Закон Республики Грузия об упразднении Юго–осетинской Автономной Области, *Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг., с. 31-33.* Նշված օրենքով իրավաբանական ուժը կորցրած ճանաչվեցին նաև 1990թ. դեկտեմբերի 9-ին անցկացված Հվ. Օսիայի ԳԽ ընտրությունները:

[2] Էդ.Շևարդնաձեի և Բ.Ելցինի կողմից պայմանագիրն ստորագրվել է 1992թ. հունիսի 24-ին՝ ՌԴ Սոչիի շրջանի Դագոմիս ավանում, տե՛ս Соглашение о принципах урегулирования грузинско-осетинского конфликта, *Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг., с. 252-253.*

[3] Декларация о независимости Республики Южная Осетия, *Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг., с. 203-204.*

[4] Заявление Центральной комиссии референдума Республики Южная Осетия, *Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг., с. 207.*

[5] Акт провозглашения независимости Республики Южная Осетия, *Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг., с. 210.*

թյունը բազմիցս դիմել է Ռուսաստանի բարձրագույն ղեկավարությանը՝ ընդառաջ գնալ 1992թ. հունվարի 19-ի հանրաքվեի միջոցով ժողովրդի արտահայտած ցանկությանը, ճանաչել ՀՕՀ անկախությունը և այն ընդգրկել Ռուսաստանի կազմում: Բնականաբար, Հվ.Օսիան պայքարում էր՝ միանալու իր եղբայրակից Հյուսիսային Օսիայի ԻՀ-ին և նրա հետ միասին ՌԴ կազմում վերածվել մեկ առանձին ԻՀ-ի: Այդ ցանկությունը վառ արտահայտված է հատկապես ՀՕՀ ԳԽ 1993թ. մարտի 12-ին տարածած հայտարարության մեջ. «Հվ. և Հս. Օսիաների մեջ ոչ մի պետական սահման չի եղել և չի կարող լինել նաև ապագայում: Ռուսական սահմանը կարող է անցնել միայն Վրաստանի հետ ՀՕՀ հարավային սահմաններով»[1]: Ռուսաստանը Հվ.Օսիայի անկախությունն ի վերջո ճանաչեց 2008թ. օգոստոսի 26-ին, նույն ամսի 8-12-ը տեղի ունեցած հնգօրյա ռազմական բախման արդյունքում: Նոր իրողությունների պայմաններում Դագոմիսյան համաձայնագրի փոխարեն հրապարակի վրա հայտնվեց ռազմական հակամարտության կարգավորման վերաբերյալ Մեդվեդև-Սարկոզիի պլանը:

Հարավօսական հակամարտության ժողովրդագրական ասպեկտը

ա. Վրաստանաբնակ (Հվ.Օսիայի ԻՄ սահմաններից դուրս բնակվող) օսերի խնդիրը: Թռեղքի (Թրիալեթ) օսեր

ԽՍՀՄ-ը նոր տիպի հանրակցության վերածելու և Վրաստանի անկախության վերականգնման մասին հանրաքվեների անցկացմանը (համապատասխանաբար՝ 1991թ. մարտի 17 և 31), Հվ.Օսիայում իրադրության ծայրահեղ սրմանը և զինված հակամարտության վերաճելուն զուգահեռ՝ Վրաստանում տեղի էր ունենում Հվ.Օսիայից դուրս բնակվող ազգությամբ օս բնակչության զանգվածային էթնիկ զտում: Այդ գործընթացն առավել սուր արտահայտվեց Թռեղքի (Թրիալեթի) օսերի շրջանում, որոնք բնակվում էին համանուն լեռնաշղթայի հյուսիսային, մասամբ նաև հարավային փեշերին գտնվող Խաշուրի, Քարելի, Գորիի, Կասպիի, Բորժոմի և Թեթրիծդարոյի շրջաններում: Փաստենք, որ Թռեղքի օսերի թիվը մինչ նշյալ զանգվածային բռնաճնշումներն ու էթնիկ զտումները և այդ իրադարձություններից հետո ունի հետևյալ պատկերը[2].

[1] Обращение Верховного Совета Республики Южная Осетия о невозможности установления границ между Северной и Южной Осетией, *Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг., с. 221.*

[2] Տվյալները հաշվարկել ենք http://www.ethno-kavkaz.narod.ru կայքի «Վրաստան» բաժնի, ինչպես նաև 2002 և 2014թթ. Վրաստանում անցկացված պաշտոնական մարդահամարի տվյալների հիման վրա:

1939թ.	1959թ.	1989թ.	2002թ.	2014թ.
40.114	35.783	մոտ 40.000	14.325	5.871

Ինչպես երևում է բերված տվյալներից՝ 1990-ական թթ. միայն Թռեղքի 6 շրջաններում օսերի թիվը կտրուկ անկում է ապրել և շուրջ 40.000-ից հասել ընդամենը 5.871-ի: Գրեթե նույն պատկերն է նաև ընդհանուր Վրաստանում ապրող օսերի (առանց Հվ.Օսիայում ապրող օսերի թվի) պարագայում: Այսպես.

1989թ.[1]	1993թ.[2]	2002թ.[3]	2014թ.[4]
98.823	45.700	36.916	14.385

Պարզորոշ է, որ հետխորհրդային Վրաստանում Հվ.Օսիայի սահմաններից դուրս, Թռեղքում, Վրաստանի մի շարք այլ մարզերում և մայրաքաղաքում ապրող օսերի թվի կտրուկ նվազումը (կարելի է ասել՝ գրեթե զրոյացումը) կապված է Հվ.Օսիայի չկարգավորված հակամարտության, ինչպես նաև Զ.Գամսախուրդիայի իշխանության օրոք սկիզբ առած զանգվածային բռնությունների, տեղահանությունների և էթնիկ զտումների հետ: Հայտնի են փաստեր, որ, օրինակ, Բորժոմի շրջանի շուրջ 9 օսաբնակ գյուղերի բնակչությանը 1991թ. գարնանը ստիպել են մեկ օրում լքել իրենց բնակավայրերը: Տարբեր տվյալներով՝ շուրջ 3.000 օս այդ օրերին փախել է Ջավախք և տեղի հայության օժանդակությամբ անցնելով ՀՀ՝ այնտեղից մեկնել Վլադիկավկազ[5]: Բռնությունների և տեղահանությունների թեժ կենտրոններ են եղել նաև Գորիի և Քարելի շրջանների օսերի բնակավայրերը: Պարզորոշ էր, որ վրաստանա-

[1] 1989թ. ԽՍՀՄ պաշտոնական մարդահամարի տվյալներով՝ ողջ Վրաստանում օսերի թիվը կազմում էր 164,055 մարդ: Եթե այս թվից հանենք Հվ.Օսիայում նույն ժամանակ ապրող 65,232 օսերի թիվը (տե՛ս http://www.ethno-kavkaz.narod.ru/rnsossetia.html), ապա Հվ.Օսիայից դուրս ապրող օսերի թիվը Վրաստանում կկազմի 98,823:

[2] *И.Кочиева, А.Маргиев,* Грузия. Этнические чистки в отношении осетин, источник: https://www.e-reading.club/bookreader.php/88842/Kochieva%2C_Margiev_-_Gruziya._Etnicheskie_chistki_v_otnoshenii_osetin.html.

[3] Պաշտոնական վիճակագրական տվյալներում Վրաստանի օսերի թիվը նշվում է 38.028, որը հաշվարկված է մինչև 2008թ. Վրաստանին հասանելի երկու շրջանների (Կոդորի (Աբխազիա) և Ախալգորի (Լենինգորի, Հվ.Օսիա) հետ միասին: Ինչպես նախորդ, այնպես էլ 2014թ. տվյալների հետ համեմատելու, ինչպես նաև մեր աշխատանքում Հվ.Օսիայի ժողովրդագրական խնդիրներն առանձնաբար քննարկելու համար աղյուսակում բերել ենք Վրաստանի օսերի թիվն առանց այս շրջանների:

[4] Տե՛ս 2014թ. Վրաստանի պաշտոնական մարդահամարի տվյալները:

[5] Տողերիս հեղինակի՝ Բորժոմի շրջանի Բակուրիան ավանում բնակվող հարազատների վկայությամբ՝ այդ ճակատագրական օրերին տեղի հայությունը, վտանգելով սեփական կյանքը և ազատությունը, մեծապես օժանդակել է իրենց կողքին ապրող օսերին, պատսպարել նրանց անվտանգ վայրերում և այլն:

բնակ օսերի հանդեպ նման անհանդուրժողական քաղաքականությունը պայմանավորված էր երկրում փոթորկվող այլատյացությամբ և Զ.Գամսախուրդիայի ձեռնարկած քայլերով: Պետք է նշել, սակայն, որ վրացական իշխանությունների այդ մտավախություններն ավելի շատ օսերի հանդեպ կիրառվող բռնություններն արդարացնելու պատճառ էին, քանի որ ինչպես Թռեղքի, այնպես էլ Վրաստանի մյուս մարզերի խաղաղ օս բնակչության շրջանում իսպառ բացակայել են նման տրամադրությունները:

Բերված ցուցանիշները վկայում են նաև կարևոր և հետաքրքրական մեկ հանգամանք ևս. և՛ Թռեղքի օսերի պարագայում, և՛ Հվ.Օսիայի ԻՄ սահմաններից դուրս բնակվող ընդհանուր Վրաստանի օսերի պարագայում ժողովրդագրական ցուցանիշների գրեթե նույնքան շեշտակի անկում է գրանցվել նաև Մ.Սաակաշվիլու իշխանության տարիներին: Այսպես, եթե 1989-2002թթ. Թռեղքի օսերի թիվը կրճատվել է շուրջ 64%-ով, ապա 2002-2014թթ.՝ 59%-ով: ՀՕԻՄ-ից դուրս ապրող վրաստանաբնակ օսերի թիվը ևս 1989-2002թթ. կրճատվել է 62%-ով, իսկ 2002-2014թթ.՝ 61%: Ավելին, եթե համեմատենք ՀՕԻՄ-ից դուրս ապրող վրաստանաբնակ օսերի թվի կրճատման տեսանկյունից Զ.Գամսախուրդիայի և Մ.Սաակաշվիլու իշխանության տարիները, ապա կստացվի, որ առաջինի դեպքում (տե՛ս 1989-1993թթ. տվյալները) օսերի թիվը կրճատվել է շուրջ 54%-ով, իսկ ահա եվրոպական ժողովրդավարական արժեքներ դավանող Մ.Սաակաշվիլու ռեժիմի «հանդուրժողական» միջավայրում օսերի թիվը կրճատվել է 61%-ով (տե՛ս 2002-2014թթ. տվյալները):

բ. Հարավային Օսիայի ժողովրդագրական խնդիրները

1989թ. ԽՍՀՄ պաշտոնական մարդահամարի տվյալներով՝ Հարավօսական ԻՄ ազգաբնակչության ընդհանուր թիվը կազմում էր 98,527, որից օս էր 65,232-ը (66,2%), վրացի՝ 28,544-ը (29,0%): Օս ազգաբնակչությունը գերակշռում էր մայրաքաղաք Ցխինվալում (74,5%) և երեք՝ Ջավայի (91,5%), Ջնաուրի (63,4%) և Ցխինվալի (52,6%) վարչական շրջաններում: ՀՕԻՄ չորրորդ և վերջին շրջանում՝ Լենինգորում (Ախալգոր), գերակշռել են վրացիները (53,8%):

Ընդհանուր առմամբ, եթե համեմատենք ԽՍՀՄ տարբեր տարիներին անցկացված մարդահամարների տվյալները, ապա կստացվի, որ ՀՕԻՄ տարածքում օսերի և վրացիների թվի հարաբերակցությունն ունեցել է աննշան տատանումներ և գրեթե չի փոփոխվել, և օսերի թիվը գրեթե մշտապես կազմել է 64-66%, իսկ վրացիների թիվը՝ 28-35%[1].

[1] *А.Цуциев,* Атлас этнополитической истории Кавказа (1774-2004), М., 2006, с. 104.

1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2002թ.
66% - 28%	66% - 28%	66% - 29%	66% - 29%	64% - 35%

Ավելին, վերոբերյալ աղյուսակից պարզորոշ է դառնում նաև մի շատ կարևոր հանգամանք. չնայած Զ.Գամսախուրդիայի տարիներին տեղի ունեցած օսերի զանգվածային էթնոզտմանն ու երկրից վտարման քաղաքականությանը, ինչպես և վրաց-օսական հարաբերությունների ծայրահեղ լարվածությանն ու մեկուկես տարի տևած զինված բախումներին, այդուհանդերձ, մինչ 2008թ. հնգօրյա պատերազմը Հվ.Օսիայում վրացիների էթնոզտում տեղի չի ունեցել: 1989թ. համեմատ 1993թ. գրանցվել է ՀՕ ընդհանուր ազգաբնակչության թվի նվազում՝ 98,5 հազարից հասնելով 70 հազարի[1]: Այստեղ նաև պետք է հաշվի առնել պատերազմական իրողություններով պայմանավորված (հիշենք, որ հիմնովին կամ մասնակիորեն ավերվել էին ինչպես հարյուրավոր գյուղական բնակավայրեր, այնպես էլ Ցխինվալ քաղաքը) երկրի ազգաբնակչության ժամանակավոր հեռացումը դեպի անվտանգ վայրեր (օսական հատվածը՝ Հյուսիսային Օսիա, վրացական հատվածը՝ Վրաստան): Ճիշտ է, ինչպես օսերից, այնպես էլ վրացիներից շատերը հեռացել են անվերադարձ, այդուհանդերձ, համաձայն հետպատերազմյան ցուցանիշների՝ օսերի և վրացիների ընդհանուր թվային հարաբերակցությունը պահպանվել է: Այն իրողության մասին, որ վրաց-օսական առաջին հակամարտությամբ պայմանավորված ՀՕ վարչական սահմաններում վրացիների էթնիկ զտում տեղի չի ունեցել, փաստում են ոչ միայն թվերը, այլ նաև մի շարք հայտնի հեղինակներ: Վրացիների մի հատվածը, լոյալություն դրսևորելով հարավօսական իշխանությունների հանդեպ, անգամ պատերազմի ու ռմբակոծությունների ծանր օրերին շարունակեց ապրել Ցխինվալ քաղաքում (վերջիններիս թիվը 700-ից անցնում էր, քաղաքում մնացել էին նաև շուրջ 340 վրացախոս հայեր): Հվ.Օսիայի վրացի ազգաբնակչությանը, որը պատերազմի օրերին չեզոքություն դրսևորեց և չմարտնչեց օսերի դեմ, Վրաստանում համարեցին դավաճաններ[2]:

Հետպատերազմյան շրջանում՝ մինչև 2008թ., վրացիները շարունակեցին ապրել ՀՕ-ում ինչպես առանձին, այնպես էլ վրաց-օսական խառը բնակավայրերում: Արդյունքում՝ առաջացան իրար հաջորդող վրացական և

[1] *А.Скаков,* Южная Осетия: социально-демографические проблемы, экономика, политика, Грузия: проблемы и перспективы развития, т. 1, РИСИ, М., 2002, с. 173.

[2] *И.Кочиева, А.Маргиев,* Грузия. Этнические чистки в отношении осетин, источник: https://www.e-reading.club/bookreader.php/88842/Kochieva%2C_Margiev_-_Gruziya._Etnicheskie_chistki_v_otnoshenii_osetin.html.

օսական, այսպես կոչված, անկլավային գոտիներ, որոնք, օս հեղինակ Ա.Ցուցիևի պատկերավոր բնորոշմամբ, ստացան «շերտավոր կարկանդակի» ձև[1]: Այդպիսի անկլավային գոտի առաջացավ և՛ Զնաուր քաղաքի շրջակայքում, և՛ Ցխինվալի շրջանում, որտեղ Մեծ և Փոքր Լիախվա գետերի երկայնքով տեղակայված էին զգալի թվով վրացաբնակ կամ խառը բնակչությամբ բնակավայրեր, և՛ Լենինգորի շրջանում, որտեղ Քսանի գետի երկայնքով առկա էին մեկուկես տասնյակից ավելի վրացաբնակ կամ խառը բնակչությամբ գյուղեր: Լենինգորի շրջանի արևելյան՝ վրացական իշխանություններին ենթարկվող այս հատվածը (Քսանի գետի հովիտը) Վրաստանի վարչատարածքային կառուցվածքի ձևավորման ժամանակ Վրաստանի ղեկավարի հրամանագրով (1995թ. մարտ) մտցվեց նորակազմ Մցխեթա-Մթիանեթի նահանգի մեջ[2]: Համավրաստանյան մարդահամարի ժամանակ (2002թ.) Լենինգորի շրջանի այս հատվածում ևս անցկացվեց մարդահամար, ստացված տվյալների համաձայն՝ այստեղ ապրող վրացիների թիվը կազմում էր 6,520, օսերինը՝ 1,110: Եթե այս թիվը համեմատենք Լենինգորի շրջանի 1989թ. ցուցանիշների հետ (վրացիների թիվը կազմում էր 6,493), ապա առավել հիմնավոր կդառնա վերը բերված փաստարկն առ այն, որ ՀՕ վրացական ազգաբնակչությունը չի ենթարկվել զանգվածային արտաքսման:

ՀՕ միջազգային ճանաչումը բացառող գործոնները

Վրաց-օսական վերոնշյալ «շերտավոր կարկանդակում» առկա խնդիրները համակարգվում էր ինչպես ՀՕՀ իշխանությունների և վրացական վարչակազմի (Շիդա Քարթլիի նահանգային իշխանությունների), այնպես էլ 1992թ. հունիսի 24-ի Դագոմիսյան համաձայնագրով ստեղծված Խառը վերահսկիչ հանձնաժողովի (ԽՎՀ) միջոցով (հանձնաժողովը բաղկացած էր Ռուսաստանի, Վրաստանի, Հս. և Հվ.Օսիաների ներկայացուցիչներից): Դագոմիսյան համաձայնագրով ստեղծվել և, ելնելով ՀՕ տարածքի անկլավային գոտիների դասավորվածությունից, համապատասխան հատվածներում տեղակայվել էին Խաղաղապահների խառը ուժեր՝ բաղկացած ռուսական, օսական և վրացական զումարտակներից: Դագոմիսյան համաձայնագրով նախատեսված միջոցառումները բազմաթիվ հեղինակներ համարել

[1] *А.Цуциев,* Атлас этнополитической истории Кавказа (1774-2004), М., 2006, с. 92.

[2] 1990-ական թթ. կեսերին ձևավորված Վրաստանի նոր վարչատարածքային բաժանմամբ ՀՕ տարածքները ներառվեցին 4 նորաստեղծ նահանգների մեջ. ՀՕ-ի արևելյան հատվածը ներառվեց Մցխեթա-Մթիանեթի, կենտրոնական հիմնական հատվածը՝ Շիդա Քարթլիի, արևմտյան մի փոքր հատված մտցվեց Իմերեթի և, վերջապես, հյուսիսարևելյան ևս մի փոքր հատված ներառվեց Ռաջա-Լեչխումի և Քվեմո Սվանեթիի նահանգների մեջ:

են խաղաղության պահպանման և լարվածության թուլացման լավագույն մեխանիզմը: ԽՎՀ-ի, ԵԱՀԿ-ի (ԵԱՀԿ գրասենյակը Ցխինվալում հիմնվեց 1997թ. ապրիլի 22-ին) և տարբեր այլ միջնորդական մեխանիզմների միջոցով ՀՕ վրացի և օս ազգաբնակչությունն ազատ և անվտանգ կերպով տեղաշարժվում էր, չնայած երկուստեք ղեկավարության միջև առկա բազմաթիվ բարդ խնդիրներին, այդուհանդերձ, գրեթե նվազագույնի էին հասցված երկու ժողովուրդների միջև առկա հակասությունները, որոնք առավելապես առնչվում էին ոչ թե ազգային խնդիրներին, այլ հողային և տնտեսական հարաբերություններին[1]: Չնայած Զ.Գամսախուրդիայի տարիներից Վրաստանում տարված հակաօսական քարոզչությանը՝ օսերի հանդեպ կիրառված էթնոզտման քաղաքականությանը և օսերին «լեռնական բարբարոսներ» պիտակավորելուն, վերոբերյալ փաստերն ապացուցում են, որ ինչպես տվյալ, այնպես էլ հետագա ժամանակահատվածում Հվ.Օսիայի օսաբնակ միջավայրում վրացիներն ապրել են բավական խաղաղ և համերաշխ միջավայրում:

Հետդագոմիսյան շրջանում, մինչև 2000-ական թթ. կեսերը, բազմիցս հանդիպումներ են տեղի ունեցել Վրաստանի և ՀՕ բարձրագույն ղեկավարության միջև, քննարկվել են էներգետիկ, տրանսպորտային, ֆինանսաբանկային և տնտեսական համագործակցությանն առնչվող հարցեր: Չնայած տեխնիկական բազմաթիվ խնդիրներին՝ մինչև 2006թ. այս կամ այն կերպ շարունակում էր գործել Ռոքի թունելը[2], և բազմիցս քննարկվում էր Ռուսաստանի հետ այս կարևոր անցակետը Վրաստանի և ՀՕ-ի կողմից համատեղ շահագործելու հարցը: Ի դեպ, Ռոքի թունելին հարող ռուս-հարավօսական (վրացական) սահմանային անցակետի («Ներքին Զարամագ-Ռուկ») հիմնման մասին որոշումը կայացվել է հենց այս շրջանում՝ 1993թ.[3]: Վերականգնվել էր Ցխինվալ-Գորի գազատարը և այլն:

[1] *А.Скаков,* Южная Осетия: социально-демографические проблемы, экономика, политика, Грузия: проблемы и перспективы развития, т. 1, РИСИ, М., 2002, с. 172.

[2] Վրաց-ռուսական հարաբերությունների հետզհետե սրման պայմաններում 2006թ. հուլիսի 8 -ին փակվեց Վրաստանը Ռուսաստանին կապող «Կազբեկ-Վերին Լարս» սահմանային անցակետը (վերստին բացվեց 3 տարի անց և գործում է մինչ օրս): Ի պատասխան՝ վրացական իշխանությունները մեկ օր անց սրեցին իրավիճակը Ռոքի թունելին հարող ռուս-հարավօսական (վրացական) սահմանային անցակետում, արգելելով ռուսական անձնագրով քաղաքացիների մուտքը երկիր: ՀՕ օս ազգաբնակչության շուրջ 98%-ը հանդիսանում էր ՌԴ քաղաքացի, ուստի նշված քայլը խիստ բացասական արձագանք գտավ ՀՕ իշխանությունների մոտ, տե՛ս Перенаправленный взрыв, Грузия и Южная Осетия обвиняют друг друга в убийстве Олега Алборова, источник: https://www.kommersant.ru/doc/688852.

[3] Соглашение между Правительством Российской Федерации и Правительством Республики Грузия о пунктах пропуска через таможенную границу (Заключено в г.Москве 08.10.1993), Дипломатический вестник, N 23 - 24, 1993.

Ընդհանուր գծերով ներկայացնելով Դագոմիսյան համաձայնագրից (1992թ.) մինչև վրաց-օսական 2008թ. հնգօրյա պատերազմն ընկած ժամանակաշրջանը՝ փաստենք, որ նման պայմաններում որևէ խոսք չէր կարող լինել ՀՕՀ միջազգային ճանաչման վերաբերյալ: Չնայած մեկուկես տասնամյակի ընթացքում ՀՕՀ ղեկավարությունը ճանաչման խնդրանքով բազմիցս դիմել էր ՌԴ-ին, այդուհանդերձ, այդ քայլին չէր պատրաստվում գնալ նաև ՌԴ-ն: Պատճառներից առանցքայինը, մեր կարծիքով, հետևյալն էր. Դագոմիսյան համաձայնագրով ստեղծված ռազմաքաղաքական, տարանցիկ, տնտեսական և, հատկապես, ժողովրդագրական իրավիճակը չէր տալիս այդպիսի հնարավորություն: Մի քանի վրացաբնակ անկլավների գոյությունը ՀՕ վարչական սահմաններում, վրացական իշխանությունների՝ միջնորդավորված և ուղղակի լիազորությունների տարածումն այդ բնակավայրերի վրա, Դագոմիսյան համաձայնագրով այդ վայրերում տեղակայված վրացական գումարտակների առկայությունը, ԽՎՀ գոյությունը, վերջինիս միջոցով և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ վրաց-օսական որոշակի (թեկուզև շատ դեպքերում անարդյունք) բանակցությունների առկայությունը, մեծագույն ցանկության պարագայում անգամ, մոտ ապագայում բացառում էին ՀՕՀ միջազգային ճանաչումը: Դա խոստովանում էին նաև օս հեղինակները. Ա.Ցուցիևն այդ առիթով 2004թ. գրում էր. *«Հվ.Օսիայի պարտադիր ճանաչումը (միջազգային – իրավական առումով) քիչ է հավանական»*[1]: Տվյալ դեպքում խոսքը կարող էր վերաբերել բազմակողմ համաձայնագրով ամրագրված ինչ-որ ասոցացված պետական կազմավորմանը, որը պետք է գոյություն ունենար Վրաստանի կազմում և ամրագրվեր Վրաստանի սահմանադրությամբ:

Հարցի բարդությունը լավ էին պատկերացնում նաև Հարավային Օսիայի ղեկավարները. երկարամյա փորձառություն ունեցող հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, 2004-2009թթ. ՀՕՀ խորհրդարանի նախագահ Զ.Գասիևը 2005թ. տված հարցազրույցներից մեկում շոշափում է նաև վրացական անկլավներից մեկի՝ Հյուսիսային և Հարավային Օսիաների միջև գտնվող 4 վրացաբնակ գյուղերի հարցը, որտեղ գործածվում էր վրացական արժույթը, բնակչությունը մասնակցում էր Վրաստանի համապետական ընտրություններին և այլն: Երկու Օսիաների միացման և միասնաբար ՌԴ կազմում ընդգրկվելու դեպքում Զ.Գասիևն առաջարկում էր երկու տարբերակ: Առաջին տարբերակի համաձայն՝ նշյալ գյուղերի վրացի

[1] *А.Цуциев*, Атлас этнополитической истории Кавказа (1774-2004), М., 2006, с. 93.

ազգաբնակչությանը պետք է վտարեին ՀՕՀ-ից, որին կտրականապես դեմ էր նաև ինքը՝ Զ.Գասիևը, իսկ երկրորդ տարբերակով վերջիններս պետք է մնային ՀՕՀ-ում՝ Վրաստանի քաղաքացիությունից հրաժարվելու կամ, ծայրահեղ դեպքում, երկքաղաքացիություն (խոսքը տվյալ դեպքում վերաբերում էր ՌԴ քաղաքացիություն ստանալուն) ստանալու պայմանով[1]: Պարզորոշ էր, որ օս պետական գործչի այս առաջարկ-պայմանը վերաբերում էր նաև ՀՕՀ մնացած վրացաբնակ անկլավների ազգաբնակչությանը: Փաստենք, որ օսական կողմի՝ խնդրի լուծման այս տարբերակներից յուրաքանչյուրը գործնական հողի վրա իրականացնելը չափազանց բարդ էր և, կարելի է ասել, տվյալ ժամանակափուլի համար՝ անհնարին: Ավելին. Թբիլիսիի կողքին գտնվող, արտաքին աշխարհից Մեծ Կովկասյան լեռնաշղթայով կտրված, ընդամենը 60 հազար բնակչությամբ և մեկ երրորդով վրացաբնակ Հվ.Օսիայիում վրաց-օսական «շերտավոր կարկանդակի» էթնոժողովրդագրական պատկերը տարիներ կամ տասնամյակներ շարունակ պահպանվելու դեպքում՝ երկրամասի վրա վերահսկողությունը կարող էր ինքնաբերաբար վերադառնալ Վրաստանին, հենց որ թուլանար Հվ.Օսիային տրվող քաղաքական և ռազմական արտաքին աջակցությունը: Ուստի, 2008թ. նախորդող իրավիճակում այս տարածքում անկախ պետականության գաղափարը շատ քիչ իրական բովանդակություն կարող էր ունենալ, եթե անգամ այն ճանաչեին ոչ միայն Ռուսաստանը, այլև Միացյալ Նահանգները և Եվրոպական միությունը:

Տասնյակ հազարավոր օսաբնակ վրացիների հայրենազրկումը. Միխեիլ Սաակաշվիլին ՀՕՀ միջազգային ճանաչման ճարտարապետ

Հանրության մեծ մասի մեջ կարծրացած այն տեսակետը, թե ՀՕ-ն մինչև 2008թ. պատերազմն[2] այսպես թե այնպես կորած էր Վրաստանի համար, հիմնականում միակողմանի քարոզչության արդյունք է և միտված է կոծկելու Մ.Սաակաշվիլու՝ սեփական պետությանը պատճառած անդառնալի կորուստների չափը[3]: Իրականում Հվ.Օսիայի՝ Վրաստանի համար իրա-

[1] ოსეთს ეხლა ამერიკასთან მიერთება მოუნდათ, "ახალი თაობა" («Ախալի թաոբա» - «Նոր սերունդ»), N 287, 2005.

[2] Պատերազմական գործողությունների դրդապատճառների, տարածաշրջանային հետևանքների և ազդեցությունների մասին տե՛ս *Գ.Հարությունյան,* Հվ.Օսիայի շուրջ հակամարտության առանձնահատկությունները, 21-րդ ԴԱՐ, թիվ 3 (21), 2008, էջ 3-14:

[3] Այս մտայնությունը հիմնականում գերիշխում է ՀՀ ընդդիմադիր և որոշ արևմտամետ շրջանակների մեջ, որոնք, հակադրվելով ՀՀ իշխանություններին, ձգտում են Մ.Սաակաշվիլուն ներկայացնել որպես մեծագույն ժողովրդավար և ռեֆորմատոր:

կան և վերջնական «կորստի», ինչպես և ՀՕՀ միջազգային ճանաչման համար հարկավոր էին նոր իրավիճակ և նոր գործընթացներ, որոնք կբերեին ստեղծված ստատուս քվոյի խախտմանը, քանի որ ճանաչումը կենթադրեր նաև Դագոմիսյան համաձայնագրի չեղարկում: Մ.Սաակաշվիլու իշխանության առաջին տարիներին ՀՕ ամեն կերպ նվաճման մասին հայտարարությունները[1], ռազմական բյուջեի շեշտակի ավելացումը ($30 մլն՝ 2003թ. և $940 մլն՝ 2007թ.), հակամարտության խաղաղ կարգավորման համար Դագոմիսյան համաձայնագրով կյանքի կոչված ԽՎՀ-ից 2008թ. մարտին Վրաստանի դուրս գալու մասին որոշումը[2], «Մաքուր դաշտ» ռազմական օպերացիայի հրապարակ բերելը և, ի վերջո, 2008թ. օգոստոսին տեղի ունեցած հնգօրյա պատերազմը և ՀՕ տարածքում վրացաբնակ անկլավների գրեթե վերացումը ստեղծեցին օսական կողմի համար այդքան սպասված և խիստ նպաստավոր իրավիճակը: Փաստենք, որ միջազգային կազմակերպությունների տվյալների համաձայն՝ հնգօրյա պատերազմի արդյունքում ՀՕ-ից հեռացավ և Վրաստանում հանգրվանեց շուրջ 15,000 վրացի[3], ովքեր, ի տարբերություն ՌԴ-ում հանգրվանած մի քանի տասնյակ հազար օս փախստականների, այլևս չվերադարձան իրենց բնակավայրեր: Արդյունքում՝ Հվ.Օսիան վերածվեց գրեթե մոնոէթնիկ պետական կազմավորման. 2015թ. կայացած առաջին համընդհանուր մարդահամարի տվյալներով՝ 48,146 օսերի կողքին ապրում էր ընդամենը 3,966 վրացի (ՀՕՀ բնակչության ընդհանուր թիվը 53,532 էր), որոնք բնակվում էին Զաուի (նախկինում՝ Զավա, 354), Ջնաուրի (431), Ցխինվալի (309), Լենինգորի (2337) շրջաններում և մայրաքաղաք Ցխինվալում (535)[4]: Պարզորոշ է, որ Հվ.Օսիայի՝ որպես մոնոէթնիկ, Վրաստանի իշխանությունների հետ բոլոր ձևի և տեսակի հարաբերությունները խզած պետական կազմավորման ճանաչումն արդեն

---

[1] Վրաստանի պաշտպանության նախարար Ի.Օքրուաշվիլին 2006թ. մայիսի 1-ին «Իմեդի» հեռուստատեսության ուղիղ եթերում հայտարարեց, որ չի հրաժարվում իր մտադրությունից և պատրաստվում է 2007թ. Ամանորը դիմավորել ՀՕ մայրաքաղաքում: Նա նաև նշեց, որ հրաժարական կտա, եթե դա տեղի չունենա, տե՛ս Окруашвили уволится, если не встретит Новый год в столице Южной Осетии, источник: http://www.kavkaz-uzel.eu/articles/93943/. Վրացական և օսական շրջանակները համապատասխանաբար ողջունեցին և դատապարտեցին նրա այս հայտարարությունը, տե՛ս ირაკლი ოქრუაშვილს ამ მთავრობაში ყველაზე მეტ პატივს ვცემ, ''ახალი თაობა'' («Ախալի թաոբա» - «Նոր սերունդ»), N 31, 2006, ''ოქრუაშვილი ოსია. ერთი ჩამოვიდეს, ნახე, რა დღეს დავაყრი'', ''კრიმინალი'' («Կռիմինալի» («Քրեական»), N 39, 2006.

[2] Грузия зовет Запад на подмогу, источник: https://utro.ru/articles/2008/03/05/721413.shtml.

[3] ООН: из-за конфликта в Южной Осетии беженцами стали более 118 тыс. человек, источник: https://www.gazeta.ru/news/lenta/2008/08/15/n_1257685.shtml:

[4] Итоги всеобщей переписи населения РЮО 2015 года, официальное издание, Цхинвал, 2016, с. 98-103.

որևէ բարդություն չէր կարող ներկայացնել, ինչը և տեղի ունեցավ հնգօրյա պատերազմից օրեր անց:

Որքան էլ օսական կողմի համար մեծ է 2008թ. օգոստոսյան պատերազմի ցավը, իսկ խաղաղ բնակչության կորուստներն՝ անդառնալի, այդուհանդերձ, Վրաստանի նշյալ շրջանի ռազմաքաղաքական ղեկավարության, այն է՝ Մ.Սաակաշվիլու և իր թիմակիցների արկածախնդիր քայլերով օս ժողովրդին «մատուցած ծառայություններն» ունեցան դարակազմիկ նշանակություն և բացեցին նոր էջ ՀՕ պատմության մեջ[1]:

Ապրիլ, 2018թ.

ՀԱՐԱՎՕՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Վահե Սարգսյան

Ամփոփագիր

1992թ. հունիսի 24-ի Դագոմիսյան համաձայնագրով (զինադադար) ստեղծված ստատուս քվոյով ստեղծվել էր խաղաղ բանակցությունների իրական հարթակ, որն իր հերթին բացառում էր Հարավային Օսիայի Հանրապետության (ՀՕՀ) միջազգային ճանաչումը: Նշյալ գործընթացի սկզբնավորման համար հարկավոր էր ստատուս քվոյի խախտում, մի նոր իրադրություն, որը կվերացներ ՀՕՀ միջազգային ճանաչմանը խոչընդոտող հիմնական գործոնները, որոնց շարքում էին և՛ խաղաղ բանակցությունների առկայությունը, և՛ վրաց-օսական տարանցիկ, տնտեսական, էներգետիկ հարաբերությունների այս կամ այն կերպ առկայությունը, և՛ ՀՕՀ տարածքում վրացաբնակ խոշոր անկլավների գոյությունը: 2008թ. օգոստոսյան հնգօրյա պատերազմը և Մ.Սաակաշվիլու արկածախնդրությունը ստեղծեցին ՀՕՀ իրավական ճանաչման համար իրատեսական հիմքեր:

[1] ՀՕՀ միջազգային ճանաչումը և Վրաստանի համար անշրջելի իրողությունների ի հայտ գալը Մ.Սաակաշվիլու վարչախմբի արկածախնդիր քայլերի և 2008թ. հնգօրյա պատերազմի հետևանքների մեկ օրինակ է: Մինչ պատերազմը Վրաստանի վերահսկողության տակ գտնվող Կոդորի կիրճի վերջնական միացումը Աբխազիային, աբխազական հարցում Վրաստանի համար նույնքան անդառնալի շրջադարձերը, ՀՀ տարանցիկ ուղիներին հասցված խոշորամասշտաբ վնասները և բազմաթիվ այլ խնդիրներ մեր կողմից կլուսաբանվեն այլ առիթներով:

О ЮЖНООСЕТИНСКОЙ ПРОБЛЕМЕ

Ваэ Саркисян

Резюме

Подписанное 24 июня 1992г. по Дагомысскому соглашению перемирие, по которому был создан статус-кво, – реальная платформа для мирных переговоров, что в свою очередь исключает международное признание Республики Южной Осетии (РЮО). Для начала этого процесса нужно было нарушить статус-кво, создать новую ситуацию для устранения основных препятствий на пути международного признания РЮО, в том числе наличие мирных переговоров, грузино-осетинских транзитных, экономических, энергетических и иных отношений и существование крупных грузинских анклавов в РЮО. 5-дневная война в августе 2008г. и авантюризм М.Саакашвили создали реальные основания для юридического признания РЮО.

ON THE SOUTH OSSETIAN ISSUE

Vahe Sarkisyan

Resume

Dagomys agreement (ceasefire) concluded on June 24, 1992 created a status quo, which provided a real platform for peaceful negotiations, and in turn, also excluded the international recognition process of the Republic of South Ossetia (RSO). For the conception of such process a breach of the status quo was needed, a new event, which would eliminate the main factors hindering the international recognition of the RSO, among which were the peaceful negotiations, one or another form of the Georgian-Ossetian transit, economic, and energy relationships, and the existence of big enclaves in the RSO resided by the Georgians. The five-day war in August, 2008 and Saakashvili's adventurism created realistic premises for the legal recognition of the RSO.